ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2012թվականի N 20-Ն

2013ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով

Համայնքի ավագանին որոշում է.

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ գյուղական համայնքի վարչական տարածքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
3. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱԶՄԻԿ
5. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Նորամարգ համայնքի
ավագանու 2012 թվականի
դեկտեմբերի 14-ի N 20-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության(տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ հիմնական օբեկտների համար՝

1) մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար (կիրառվում է 0.5գործակիցը) .. 7500 դրամ
Սույն կետի ,1 ե ենթակետով չնախատեսված օբեկտների
ա. 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար ..... 7500 դրամ
բ. 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար.....12500 դրամ
գ. 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար .....30000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

2) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար .....1000 դրամ
3) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար .....1500 դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսգրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացու կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն ..... 1500 դրամ
2) բացի օբեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտայի չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացու կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա»ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել .....2500 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույտվության համար՝ հիմնական և ոչ հիմնակա շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար ..... 500 դրամ
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար ..... .2000 դրամ

5. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույտվության համար յուրաքանչյուր օրվա համար ..350 դրամ
2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում հեղուկ վառելիքի եւ (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի եվ տեխնիկական հեղուկների .....150000 դրամ
3) խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար .....45 000 դրամ

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի,զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբեկտները, բաղնիքները (սաունաները) խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվու-թյան համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբեկտների համար՝ .....30 000 դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբեկտների համար՝ .....75 000 դրամ
3) բաղնիքների (սաունաների) համար՝ .....250 000 դրամ
4) խաղատների կազմակերպման համար՝.....500 000 դրամ
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ .....250 000 դրամ
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝.....110 000 դրամ

7, Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրք սահմանվում է՝

1)ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ..... 1000 դրամ
2) թունդ ալկահոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ .....2500 դրամ
3)այլ արտաքին գովազդի համար՝ ..... 500 դրամ
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ ..... 700 դրամ

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել .....1000 դրամ

9,Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել .....3000 դրամ

10.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել..... 5 000 դրամ:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1)մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար..... 50 դրամ.

12.Տեղական ինքնակառավարման կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել .....1000 դրամ

13.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝

1)կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական .....10 դրամ,
2)ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսական .....1000 դրամ:

14.Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել ..... 500 դրամ:

Աշխատակազմի քարտուղար Է.Հարությունյան